ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականի 1-ին եռամսյակում 1-Ю-2017-МЭК ծածկագրով իրականացված «իրավաբանական ծառայությունների մատուցման առաջարկի բաց հարցում» գործարքի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2017

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները

<u>Մոնիթորինգի իրականացման հիմքը՝</u> ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշման №1 հավելվածով հաստատված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

<u>Մոնիթորինգի օբյեկտը՝</u> «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն):

<u>Մոնիթորինգի առարկան՝</u> Ընկերության կողմից 2017 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

<u>Մոնիթորինգի նպատակը՝</u> Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին:

<u>Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝</u> 2017 թվականի մայիսի 15-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 15-ը:

<u>Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝</u> Ընկերության գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

Իրավաբանական ծառայությունների մատուցման առաջարկի բաց հարցում

Ընկերությունը, համաձայն 2017 թվականի գնումների պլանի 1-Юр-2017-МЭК կետի և տնօրենի 2017 թվականի հունվարի 23-ի №17ԱԳ-Ա հրամանի, կազմակերպել և անցկացրել է իրավաբանական ծառայությունների մատուցման առաջարկի բաց հարցում՝ պայմանագրի կնքման իրավունքով՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2017 թվականի հունվարի 30-ը:

Հայտարարությունը Ընկերության կայքում հրապարակվել է 2017 թվականի հունվարի 20-ին՝ հրամանը ստորագրելուց 3 օր շուտ, իսկ ֆինանսների նախարարության էլեկտրոնային տեղեկագրում հայտարարությունն ընդհանրապես հրապարակված չէ:

Բաց առաջարկների հարցման հրավերին համապատասխան կարգով հայտ է ներկայացրել մեկ մասնակից՝ «Գրիգորյան» ՓԲԸ իրավաբանական գրասենյակը:

Հիմք ընդունելով Ընկերության գնումների կարգի 7.8.1.6 կետը, համաձայն որի գնումները միակ աղբյուրից կարող են իրականացվել հետևյալ դեպքում՝ «մրցույթ կամ ցանկացած այլ բաց ընթացակարգ անցկացնելիս՝ ներկայացվել էր միայն մեկ հայտ, սակայն գնումների նոր ընթացակարգերի անցկացումը, ԿԳՄ-ի կարծիքով նպատակահարմար չէ (օրինակ, գնումների ընթացակարգերի անցկացման ժամանակի սահմանները սպառվել են, նոր մրցույթ անցկացնելը չի բերի մասնակիցների շրջանակի փոփոխության և նոր հաղթող հայտնվելուն), իսկ ներկայացված հայտն ընդունելի է», որոշում է կայացվել գնումն իրականացնել միակ աղբյուրից՝ «Գրիգորյան» ՓԲԸ իրավաբանական գրասենյակից:

Հայտի գինը՝ 12 000 000 (տասներկու միլիոն) ՀՀ դրամ:

Իրավաբանական ծառայությունների մատուցման առաջարկի բաց հարցման անցկացման վերաբերյալ փաստաթղթերի (այսուհետ՝ Փաստաթղթեր) ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ.

1. հայտարարությունը Ընկերության կայքում հրապարակվել է Ընկերության տնօրենի կողմից մրցույթի անցկացման ու մրցութային հանձնաժողովի նշանակման մասին հրամանը ստորագրելուց երեք օր առաջ,
2. փաստաթղթերում առկա են պահանջներ, որոնք կրում են խտրական բնույթ՝ առանց համապատասխան հիմքերի առկայության ուղղակի խոչընդոտում կամ

սահմանափակում են հնարավոր Մասնակիցների գնմանը մասնակցելու իրավունքը: Մասնավորապես.

- Համաձայն գնման հայտարարության 2.1 կետի՝ ծառայության մատուցման գործընթացում անմիջականորեն և մշտապես ներառված Մասնակցի աշխատակիցների քանակը տարբեր ժամանակ կարող է կազմել 1-3 մարդ: Միևնույն ժամանակ համաձայն գնման հայտարարության 2.3 կետի, մասնակցից պահանջվում է ապահովել առնվազն հինգ փաստաբան-աշխատողի առկայություն, որոնք պետք է տվյալ ընկերությունում աշխատեն առնվազն հինգ տարի,
- Համաձայն գնման հայտարարության 2.3 կետի՝ Մասնակիցը պետք է շփման փորձ ունենա ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Հարկ է նշել, որ միակ հայտ ներկայացրած մասնակիցը՝ որից էլ Ընկերությունը «միակ աղբյուրից գնում» ընթացակարգով իրականացրել է գնումը, պահանջված հինգի փոխարեն ներկայացրել է միայն երեք փաստաբան-աշխատողների արտոնագրերի պատճեներ, ինչը հայտարարված պահանջների խախտում է:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

Ընկերության անվանումը «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ

Գնման անվանումը Իրավաբանական ծառայությունների մատուցում

Գնման ծածկագիրը 1-Ю-2017-МЭК

Գնման ձևը Առաջարկի բաց հարցում

ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
1	Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և բավարար տեղեկատվություն են տրամադրում, ինչը թույլ է տալիս աուդիտ կամ անկախ ստուգում իրականացնել	☑	☐	☐	

ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
2	Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը	☑	☐	☐	
3	Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել	☑	☐	☐	

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
4	Մինչև գնումների հրավերների հրապարակելն իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն (փաստաթղթերը կցված են)	☐	☑	☐	
5	Ձեռնարկվել են բավարար միջոցառումներ ոչ մրցակցային եղանակով գնումների ծավալը նվազեցնելու ուղղությամբ	☐	☑	☐	
6	Գնման գործընթացի արդյունավետ իրականացման նպատակով՝ ընկերությունը իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկատուում հրապարակելուց բացի դիմե՞լ է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար	☐	☑	☐	
7	Մասնակից մատակարարների հայտերի ընդունման գործընթացում ապահովվել է արդարությունն ու անկողմնակալությունը	☐	☐	☑	Հայտ ներկայացրել է միայն մեկ մասնակից:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
8	Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար	☐	☑	☐	Հարցման վերաբերյալ փաստաթղթերում կան չհիմնավորված պահանջներ:
9	Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը	☑	☐	☐	
10	Գնումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է	☑	☐	☐	

11	Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը	☑	☐	☐	
12	Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական բնութագրերը, իսկ աշխատանքների կամ ծառայությունների դեպքում՝ ամբողջական նկարագրությունը	☑	☐	☐	
13	Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը	☑	☐	☐	
14	Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի	☐	☑	☐	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
15	Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ	☐	☐	☑	Հայտ էր ներկայացրել մեկ մասնակից:
16	Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին	☐	☐	☑	ԱԲՀ-ն ճանաչվել է չկայացած, քանի որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից:
17	Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը	☐	☐	☑	Նախքան ԱԲՀ-ի հայտարարելն Ընկերությունը չի իրականացրել շուկայի ուսումնասիրություն, իսկ տվյալ ծառայության մատուցման շուկայական արժեքների տվյալներ հանձնաժողովը չունի: Հետևաբար դժվար է ասել,

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
					ապահովվել է տվյալ սկզբունքը, թե՝ ոչ:
18	Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը)	☑	☐	☐	ԱԲՀ-ն ճանաչվել է չկայացած, քանի որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
19	Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ	☑	☐	☐	
20	Գնման պայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով	☐	☐	☑	Միակ մատակարար ընթացակարգով կնքված պայմանագրի վերջնաժամկետն է 2017 թվականի դեկտեմբերի 31-ը:
21	Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին	☐	☐	☑	Տվյալ ծառայության մատուցման շուկայական արժեքների տվյալներ հանձնաժողովը չունի: